ԿԱՐԾԻՔ

Գայանե Սլավիկի Հովհաննիսյանի «Լեռային Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը 1920-1950-ական թթ.» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ներկա աշխարհաքաղաքական իրավիճակում Արցախի պատմության առանցքային դրվագների վերաբերյալ նախորդ տասնամյակներում չհետազոտված խնդիրներին նվիրված հետազոտություններն առավել քան արդիական և պահանջված են մեր օրերում: Առավել ևս, երբ ասվածը վերաբերում է գիտական տեսակետից հաջողված, իրապես գիտական նորույթ պարունակող հետազոտություններին:

Հայտնի իրողություն է, որ Արցախը Հայաստանի այն տարածաշրջաններից է, որի վերաբերյալ ստեղծվել է բավական մեծածավալ պատմագիտական գրականություն: Ուստի դժվար (սակայն ոչ անհնարին) է այս թեմատիկայով նոր, թարմ գիտական խոսք պարունակող և պատմագիտական նորույթ հանդիսացող հետազոտություն կատարելը: Վերջին տարիներին նման բնույթի հետազոտություններ սակավ են հանդիպում: Իբրև Հայաստանի XX դարի պատմության ուսումնասիրող և նաև իբրև պաշտոնական ընդդիմախոս մեզ համար չափազանց ուրախալի է, որ այդ փոքրաթիվ աշխատանքների շարքը համալրելու է գալիս Գայանե Սլավիկի Հովհաննիսյանի «Լեռային Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը 1920-1950-ական թթ.» խորագրով թեկնածուական ատենախոսությունը: Այն նվիրված է Արցախի պատմության մինչև այժմ սակավ հետազոտված կարևոր խնդրի՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդագրական պատկերի վերհանմանը, ժողովրդագրական գործընթացների և դրանց վրա ազդած գործոնների բացահայտմանը: Այդ տեսակետից ատենախոսի առջև դրված կարևորագույն խնդիրներից են եղել նշված ժամանակափուլում ԼՂԻՄ-ում իրականացված ժողովրդագրական քաղաքականության, բնակչության թվաքանակի, տեղաբաշխման, սեռատարիքային կազմի, տեղաշարժերի ուսումնասիրությունը՝ դրանք շաղկապելով մարզի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական գործընթացների հետ:

Գայանե Հովհաննիսյանի ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, աղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից՝ համակարգչային շարվածքով 184 էջ:

Շարադրանքում ատենախոսն ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի բնակչության ժողովրդագրական պատկերը՝ համաձայն 1921 թ. Խորհրդային Ադրբեջանում իրականացված գյուղատնտեսական ցուցակագրության, 1926, 1939, 1959 թվականներին իրականացված համամիութենական մարդահամարների տվյալների, նաև տարբեր ժամանակափուլերում (1920-ականների առաջին կես, 1920-ականների երկրորդ կես և 1930-ականներ, 1940-1950-ականներ) երկրամասի ժողովրդագրական պատկերը պայմանավորող գործոնների վերհանմանը: Մեկ ենթագլուխ էլ նվիրված է ԼՂԻՄ-ում Խորհրդային Ադրբեջանի իրականացրած ժողովրդագրական ինժեներիայի քաղաքականությանը: Աշխատանքի բուն տեքստում և հավելվածում ներկայացված է մի քանի տասնյակ աղյուսակ ու գծանկար, որոնք հնարավորություն են տալիս առավել առարկայական պատկերացում կազմել մարզի բնակչության ընդհանուր պատկերի վերաբերյալ:

Վերևում թվարկված հիմնախնդիրներն աշխատանքում լուսաբանված են բավարար մակարդակով, թեկնածուական ատենախոսությունը գրագետ շարադրված, ինքնուրույն կատարված հաջող աշխատանք է, որում օգտագործվել են թեմայի վերաբերալ եղած հիմնական աղբյուրներն ու ուսումնասիրությունները: Կարևոր է նաև արձանագրել, որ ատենախոսն ուշադրության արժանի դիտարկումներ, ընդհանրացումներ ու եզրակացություններ է կատարել: Այսպես՝ ԼՂԻՄ-ի ժողովրդագրական գործընթացները պայմանավորող գործոնները նա միանգամայն տեղին կերպով բաժանում է երկու մեծ խմբի՝ համամիութենական սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական գործընթացներ և ադրբեջանական իշխանությունների ժողովրդագրական քաղաքականության դրսևորումներ: Նա 1920-ականների սկզբի առնչությամբ իրավացիորեն գրում է, թե ԼՂ-ում մահվան դեպքերի գրանցումներն առավել ոչ լիարժեք էր կատարվում, քան ծնունդներինը, ինչը բնական աճի ենթադրյալ բարձր ցուցանիշների պատրանք էր ստեղծում՝ հանգեցնելով բնակչության թվաքանակի ոչ ճիշտ հաշվարկումների (էջ 30): Աշխատանքում ցույց է տրվում, որ Ադրբեջանի՝ ինքնավար մարզի ժողովրդագրական դիմագիծը փոխելու նպատակային քաղաքականության պայմաններում այն շարունակում էր գերազանցապես հայկական մնալ, մարզի բնակչությունն աչքի էր ընկնում բնական աճի բարձր մակարդակով: Այդուհանդերձ, տասնամյակների ընթացքում մարզում ադրբեջանցիների տեսակարար կշիռը հետզհետե մեծանում էր (1926 թ. մարդահամարի ժամանակ այն 10 % էր, 1959 թ.՝ 13,8 % (ատենախ., էջ 42, 123)): Մարզից վերարտադրողական տարիքի հայ երիտասարդների մեծածավալ արտագաղթն էլ հանգեցնում էր ժողովրդագրական ծերացման (էջ 130-131): Նման օրինակներ կարելի է էլի բերել, սակայն բավարարվենք այսքանով:

Միանգամայն հաջողված և գիտական նորույթ պարունակող սույն աշխատանքի վերաբերյալ ունենք երեք առաջարկ-դիտարկում.

1. Թեև ատենախոսության ներածական մասում նշված է, թե 1960-ական թթ. հետո ընկած շրջանում ԼՂԻՄ-ում տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացներն առանձին ուսումնասիրության խնդիր է (էջ 5), այդուհանդերձ կարծում ենք, որ աշխատանքի ժամանակագրական սահմանը նպատակահարմար էր հասցնել մինչև 1980-ական թթ. վերջը: Մանավանդ որ թեկնածուական ատենախոսության սահմանված ծավալը գերազանցելու հարց չկա (բուն տեքստը 167 էջ է): Այլապես դժվար է պատկերացնել, որ մեկ այլ հետազոտող պետք է հատուկ ուսումնասիրության խնդիր դարձնի 1960-1980-ական թթ. ժողովրդագրական գործընթացները: Ներկա պարագայում ցանկալի է, որպեսզի ատենախոսը աշխատանքը մենագրության վերածելու դեպքում առանձին գլխով ներկայացնի նաև այդ ժամանակափուլի հիմնական խնդիրները:

2. Աշխատանքն առավել կշահեր, եթե ատենախոսն առանձին շարադրանքով անդրադառնար 1940-ական թվականներին ԼՂԻՄ-ից դեպի Հայկական ԽՍՀ և հակառակ ուղղությամբ հայ բնակչության տեղաշարժերին՝ օգտագործելով Հայաստանի ազգային արխիվի Հայկոմկուսի Կենտկոմի և Կառավարության ֆոնդերում պահվող փաստաթղթերը: Նա համառոտ անդրադարձել է միայն Խորհրդային Հայաստանից ԼՂԻՄ-ում վերաբնակեցված ադրբեջանցիների խնդրին, իսկ Հայկական ԽՍՀ-ից ԼՂԻՄ տեղափոխված հայ գյուղացիների վերաբերյալ շարադրանքում որևէ ակնարկ չկա: Մասնավորապես կարելի էր անդրադառնալ սոցիալական անմխիթար պայմանների պատճառով ՀԽՍՀ Մարտունու շրջանից տասնյակ հայ ընտանիքների՝ ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի գյուղեր (Հաթերք, Վերին և Ներքին Չայլի, Մարաղա) տեղափոխությանը և այլն:

3. Կարծում ենք, կարիք չկար 1920-1950-ական թվականներին ԼՂԻՄ-ում Խորհրդային Ադրբեջանի իրականացրած ժողովրդագրական ինժեներիայի քաղաքականության վերաբերյալ առանձին ենթագլուխ (3.3) գրել: Որպես առանձին տեքստ սույն շարադրանքի ընթերցումը միանգամայն հետաքրքիր է, բայց ոչ իբրև ենթագլուխ: Փոխարենը այդ տեքստը կարելի էր տարածել մնացյալ շարադրանքի վրա, գոյություն ունեցող կրկնությունները դուրս թողնել, մանավանդ որ ենթագլխի փաստական նյութի մի մասի վերաբերյալ նախորդիվ արդեն խոսվում է:

Վերը թվարկված առաջարկ-դիտարկումներն ամենևին չեն ստվերում թեկնածուական ատենախոսությունը: Այն միանգամայն ինքնուրույն աշխատանք է, որում օգտագործված են նախորդ հետազոտողներին անծանոթ նոր փաստեր ու փաստաթղթեր: Կարող ենք ամենայն

վստահությամբ և ուրախությամբ արձանագրել, որ ի դեմս Գայանե Հովհաննիսյանի պատմագիտության բնագավառ է մուտք գործում գիտահետազոտական աշխատանք կատարելու հմտություններ ունեցող բարեխիղճ երիտասարդ ուսումնասիրող:

Ամփոփելով՝ նշենք, որ Գայանե Սլավիկի Հովհաննիսյանի «Լեռային Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը 1920-1950-ական թթ.» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտական թվանիշին, սեղմագրում և հրատարակված վեց հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները: Ատենախոսության թեման միանշանակ արդիական է, աշխատանքում ներկայացված են ուշադրության արժանի, գիտական նորություն հանդիսացող դրույթներ ու եզրահանգումներ: Ուստի՝ կարծում ենք, Գայանե Հովհաննիսյանը միանգամայն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Հ. Կ. Սուքիասյան

19.05.2023 թ.

Պ.գ.թ., դոցենտ Հ. Կ. Սուքիասյանի առնչագրությունը հաստատում եմ

ՀԱԱՀ գիտական քարտուղար, պ.գ.թ., դոցենտ Գ. Վ. Ավագյան

19.05.2023 թ.